Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
օգոստոսի 30-ի N 1104 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ www.e-gov.am (ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ) ԿԱՅՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության www.e-gov.am (էլեկտրոնային կառավարում) կայքի (այսուհետ՝ կայք) սպասարկման հետ կապված հարաբերությունները:

2. Կայքի «Գլխավոր» էջում տեղադրված են կայքի բաժինները:

3. Կայքի բաժիններն են՝

1) Գրեք նամակ կառավարությանը.

2) Հետևեք Ձեր նամակի ընթացքին.

3) Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ.

4) Ինտերակտիվ բյուջե.

5) Էլեկտրոնային ստորագրություն.

6) Կառավարության որոշումներ.

7) Վարչապետի որոշումներ.

8) Կառավարության արձանագրային որոշումներ.

9) Կառավարության նիստի օրակարգ.

10) Մեկ անձից կատարվող գնումներ (բանակցային ընթացակարգ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու ձևով կատարվող գնումներ).

11) ՊՈԱԿ-ների ֆինանսավորում.

12) Ռեեստրներ և ցանկեր.

13) Հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ.

14) Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգ.

15) Մտավոր սեփականության գործակալության տեղեկատվական որոնման համակարգ.

16) Էլեկտրոնային վիզա (e-visa).

17) ԴԱՀԿ էլեկտրոնային աճուրդի համակարգ.

18) Հայաստանի Հանրապետության իրավական տեղեկատվության համակարգ.

19) Պետական վճարումների էլեկտրոնային համակարգ.

20) Անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային համակարգ.

21) Հայաստանի ազգային պատկերասրահ.

22) Կազմակերպությունների էլեկտրոնային գրանցում.

23) Ինտերակտիվ ծանուցման պաշտոնական կայք.

24) Դատական տեղեկատվական համակարգ:

4. Կայքի «Հղումներ» էջում տեղադրված են Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների և այլ կազմակերպությունների պաշտոնական կայքերի հղումները:

5. Կայքի՝

1) **«Գրեք նամակ կառավարությանը»** բաժինը յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս գրելու իր կարծիքը, տեսակետը, դիրքորոշումը և առաջարկությունը: Էլեկտրոնային նամակները գրելու նպատակով պարտադիր լրացվում են «Ձեր հաղորդագրությունը», «Անուն, ազգանուն», «Էլ. փոստի հասցե» և տրամադրվող գաղտնաբառ

դաշտերը: Այս բաժնի համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը.

2) «**Հետևեք Ձեր նամակի ընթացքին**» բաժնի միջոցով յուրաքանչյուր ոք, ով որևէ հարցով կամ խնդրով կամ առաջարկությամբ դիմում է ներկայացրել հանրապետական գործադիր մարմիններ, պետական և տարածքային կառավարման այլ մարմիններ (այսուհետ՝ մարմին), կարող է հետևել իր դիմումի ընթացքին: Դիմումի ընթացքին կարելի է հետևել՝ մուտքագրելով համապատասխան պատուհանում մարմնի կողմից տրամադրված 12-նիշանոց հսկիչ համարը, որն ստացվել է մարմնի ընդունարանում կամ փոստի միջոցով, և մարմինը, ում հասցեագրվել է դիմումը.

3) **«Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ»** բաժինը հնարավորություն է տալիս իրավաբանական և ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերին հայտ ներկայացնելու նաև էլեկտրոնային համակարգի միջոցով՝ մի շարք պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիա ստանալու, մերժելու և վերաձևակերպելու, ուժը կորցրած ճանաչելու, կասեցնելու, դադարեցնելու (ըստ հայտատուի դիմումի) լիցենզիայի և ներդիրների կրկնօրինակ ստանալու, լրացուցիչ ներդիրներ ստանալու և ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև արդեն իսկ ներկայացրած դիմումներին ի լրումն փաստաթղթեր ներկայացնելու համար: Հայտը ներկայացնելու համար ներկայացված է էլեկտրոնային հայտերի ընդունման կարգը (կարգը կցված է կայքում): Լիցենզիա ստանալու, վերաձևակերպելու, ուժը կորցրած ճանաչելու, կասեցնելու հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում փոփոխությունների դեպքում բաժնում տեղեկատվությունը ժամանակին տրամադրելու համար պատասխանատու է լիցենզիա տրամադրող մարմինը, իսկ կայքում թարմացնելու համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում փոփոխությունների դեպքում լիցենզիա տրամադրող մարմինը

տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին տրամադրում է իրավական ակտն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը: Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը համապատասխան տեղեկատվությունը տեղադրում է տեղեկատվությունն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում.

4) **«Ինտերակտիվ բյուջե»** բաժնում տեղադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այսուհետ՝ բյուջե) բաշխումն առցանց՝ ըստ ոլորտների, ծրագրերի, ինչպես նաև ծախսված և մնացորդային գումարները՝ սկսած 2010 թվականից: Այս բաժնի միջոցով յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի տեղեկանալու, թե ինչ նպատակով, ուղղությամբ և ինչպես են ծախսվում բյուջեի գումարները, տեսնելու բյուջեի եկամուտներն ու ծախսերն առցանց ռեժիմով: Համակարգի միջոցով հնարավոր է տեղեկանալ բյուջեում կատարվող ընթացիկ ֆինանսական փոփոխություններին՝ ըստ ոլորտների, բաժինների, խմբերի, դասերի և ծախսային տողերի: Այս բաժնում տեղեկատվությունը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տվյալների մուտքագրման հետ միաժամանակ.

5) **«Էլեկտրոնային ստորագրություն»** բաժինը հնարավորություն է տալիս ստանալու էլեկտրոնային ստորագրություն էլեկտրոնային թվային ձևով՝ լրացնելով էլեկտրոնային հայտը, ինչպես նաև երկարաձգելու ստորագրության ժամկետը: Բաժինն ունի կայքէջին հղում՝ www.ekeng.am: Այս կայքում տեղադրված տեղեկատվության համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությունը.

6) **«Կառավարության որոշումներ»** բաժնում տեղադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները.

7) **«Վարչապետի որոշումներ»** բաժնում տեղադրվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումները.

8) **«Կառավարության արձանագրային որոշումներ»** բաժնում տեղադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումները.

9) «**Կառավարության նիստի օրակարգ»** բաժնում տեղադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի օրակարգը՝ ըստ ժամանակագրության, որը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի կողմից՝ ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի օրակարգն ստանալու օրը: Սույն կարգի 5-րդ կետի 6-րդ, 7-րդ, 8-րդ ենթակետերի տեղեկատվությունը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի կողմից՝ որոշումներն ստորագրվելուց ոչ ուշ, քան հաջորդ օրը՝ ըստ ժամանակագրության և հերթական համարի: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումները, Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումները հնարավոր է որոնել՝ նշելով օրը, ամիսը, տարեթիվը, որոշման համարը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի օրակարգը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի օրը, ամիսը, տարեթիվը.

10) **«Բանակցային ընթացակարգ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու ձևով կատարվող գնումներ»** բաժնում (այսուհետ՝ Մեկ անձից կատարվող գնումներ) տեղադրվում է պետական կառավարման մարմինների կողմից միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված հիմքերով՝ պայմանավորված բանակցային ընթացակարգ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու ձևով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման մասին տեղեկատվու-

թյան հետ: Տեղեկատվությունը պարունակում է մարմնի անվանումը, գնման առարկան, կատարման հիմքը, գնման պահանջի ծագման հիմքը, կատարողը, գինը, կանխավճարը, պայմանագրի կնքման ամսաթիվը և ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման վերջնաժամկետը, ինչպես նաև կցվում է պայմանագրի պատկերամուտը (scan)՝ համաձայն N 1 ձևի: Այս բաժնում տեղեկատվությունը՝

ա. թարմացվում է յուրաքանչյուր 10 օրը մեկ անգամ,

բ. տեղադրելու համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը.

11) **«ՊՈԱԿ-ների ֆինանսավորում»** բաժնում տեղադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի, հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների ենթակայության տակ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, բացառությամբ դպրոցների, ընթացիկ բյուջետային տարում կնքված բոլոր ֆինանսավորման պայմանագրերի, պատկերամուտը ու նշված կազմակերպությունների կողմից նախորդ բյուջետային տարվա ստորագրված բոլոր ընդունման-հանձնման ակտերի պատկերամուտը: Հանրապետական գործադիր մարմինների ղեկավարները և Հայաստանի Հանրապետության մարզպետները նշված պատկերամուտը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը: Տեղեկատվությունը պարունակում է պետական մարմնի անվանումը, պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումը, պայմանագրի առարկան, գումարի չափը (դրամով), կնքված պայմանագրի ժամկետը, և կցվում է պայմանագրի պատկերամուտն ու ընդունման-հանձնման ակտերի պատկերամուտը՝ համաձայն N 2 ձևի: Այս բաժնում տեղեկատվությունը տեղադրում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ տեղեկատվությունն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կարգի 5-րդ

կետի 10-րդ և 11-րդ կետերի տեղեկատվությունը կայքում կարելի է որոնել՝ ըստ մարմինների և տարեթվերի.

12) «**Ռեեստրներ և ցանկեր**» բաժնում տեղադրվում են՝

ա. արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրը, որը թարմացվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը: Տեղեկատվությունը պարունակում է արտադրական վտանգավոր օբյեկտի նկարագիրը, շահագործող անձի անունը, գտնվելու վայրը, գրանցման ամսաթիվը, պետական ռեգիստրի համարը,

բ. պետության կողմից սուբսիդավորվող 8-10 տոկոս տոկոսադրույքով տրամադրված գյուղատնտեսական վարկերի շահառուների ցուցակը, որը թարմացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի կողմից՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը պարունակում է մարզի ամսվանումը, բանկի անվանումը, բնակավայրը, շահառուի տվյալները, վարկի գումարը, վարկի վերջնական տոկոսադրույքը,

գ. ընդերքի պաշարների մասին տեղեկանքները, որոնք թարմացվում են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդերքի պաշարների վերաբերյալ տեղադրվում են օգտակար հանածոների արդյունահանման համար տրամադրված հանքային իրավունքների, օգտակար հանածոների ուսումնասիրության համար տրամադրված հանքային իրավունքների և ստորերկրյա ջրերի հանքաարդյունահանման համար տրամադրված հանքային իրավունքների մասին տեղեկանքները.

13) **«Հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ»** բաժին՝ այս համակարգը հնարավորություն է ընձեռում ներկայացնելու հար-

կային հաշվետվությունները համացանցի միջոցով: Բաժինն ունի կայքէջին հղում՝ file-online.taxservice.am: Հարկային հաշվետվությունների հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում փոփոխությունների դեպքում բաժնում տեղեկատվությունը ժամանակին թարմացնելու համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն.

14) **«Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգ»** բաժին՝ այս համակարգը հնարավորություն է ընձեռում ներկայացնելու գյուտի և օգտակար մոդելի, ապրանքային նշանի, արդյունաբերական նմուշի հայտերն էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալությանը: Բաժինն ունի կայքէջին հղում՝ my.aipa.am: Կայքէջի անխափան աշխատանքներն ապահովելու, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում փոփոխությունների դեպքում բաժնում տեղեկատվությունը ժամանակին թարմացնելու համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը.

15) **«Մտավոր սեփականության գործակալության տեղեկատվական որոնման համակարգ»** բաժին՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության այս համակարգը հնարավորություն է տալիս կատարելու որոնում արդյունաբերական նմուշների, ֆիրմային անվանումների, գյուտերի և օգտակար մոդելների, ինչպես նաև ապրանքային նշանների հիմնապաշարներում: Ներկայացված են նաև համապատասխան տեղեկության որոնման ձևի բացատրությունները: Բաժինն ունի կայքէջին հղում՝ **www.aipa.am**: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում փոփոխությունների դեպքում բաժնում տեղեկատվությունը ժամանակին թարմացնելու համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը:

16) **«Էլեկտրոնային վիզա (e-visa)»** բաժինը հնարավորություն է տալիս էլեկտրոնային եղանակով ստանալու մուտքի արտոնագիր: Մուտքի արտոնագրի հաստատման դեպքում դրա տրամադրումն այս համակարգի միջոցով տևում է երկու օր: Բաժինն ունի կայքէջին հղում՝ www.mfa.am/eVisa/: Մուտքի արտոնագրի հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում փոփոխությունների դեպքում բաժնում տեղեկատվությունը ժամանակին թարմացնելու համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը.

17) **«ԴԱՀԿ էլեկտրոնային աճուրդի համակարգ»** բաժինը հնարավորություն է տալիս օգտվելու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից հարկադիր աճուրդին վերաբերող վաճառքի էլեկտրոնային համակարգով: Բաժինն ունի կայքէջին հղում՝ achurd.harkadir.am: Պարտադիր օտարման ենթակա գույքի աճուրդով վաճառքի հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում փոփոխությունների դեպքում բաժնում տեղեկատվությունը ժամանակին թարմացնելու համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը.

18) **«Հայաստանի Հանրապետության իրավական տեղեկատվության համակարգ»** բաժին՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի միասնական էլեկտրոնային շտեմարան, որը հնարավորություն է տալիս մեկ միասնական համակարգից ծանոթանալու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը՝ սկսած միջազգային պայմանագրերից մինչև համայնքների ավագանու կողմից ընդունված որոշումները: Բաժինն ունի կայքէջին հղում՝ www.arlis.am: Հայաստանի Հանարապետության իրավական ակտերը ժամանակին տեղադրելու և թարմացնելու համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը.

19) **«Պետական վճարումների էլեկտրոնային համակարգ»** բաժին՝ այս համակարգը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական կամ տեղական տուրքերի, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարը կամ վարչական տուգանքները կատարելու էլեկտրոնային եղանակով:»: Բաժինն ունի կայքէջին հղում՝ www.e-payments.am: Այս բաժնի համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը.

20) **«Անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային համակարգ»** բաժին՝ այս համակարգը հնարավորություն է տալիս անշարժ և շարժական գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, գույքի նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցման դիմումներ ներկայացնելու առցանց համակարգի միջոցով: Բաժինն ունի կայքէջին հղում՝ www.e-cadastre.am: Այս բաժնի համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն.

21) **«Հայաստանի Ազգային Պատկերասրահ»** բաժին՝ հղում Հայաստանի ազգային պատկերասրահի մշակութային արժեքները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով: Բաժինն ունի կայքէջին հղում՝ www.gallery.am/db: Այս բաժնի միջոցով հնարավոր է որոնել ըստ նկարիչների, նկարների վերնագրերի, ժամանակաշրջանի և այլն: Այս բաժնի համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը.

22) **«Կազմակերպությունների էլեկտրոնային գրանցում»** բաժին՝ այս համակարգը հնարավորություն է տալիս «մեկ պատուհան» սկզբունքի կիրառմամբ հաշված րոպեների ընթացքում գրանցելու կազմակերպություն, հաշվառելու անհատ ձեռնարկատեր, առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ, ինչպես նաև ստանալու տեղեկա-

տվություն հետաքրքրող՝ արդեն գրանցված կազմակերպությունների և հաշվառված անհատ ձեռնարկատերերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների մասին: Բաժինն ունի կայքէջին հղում՝ www.e-register.am.

23) **«Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք»** բաժին՝ այս կայքը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում ներկայացնելու հրապարակային ծանուցումները: Բաժինն ունի կայքէջին հղում՝ www.azdarar.am.

24) **«Դատական տեղեկատվական համակարգ»** բաժին՝ այս համակարգը հնարավորություն է տալիս գտնելու համապատասխան դատական գործեր, որոնելու Հայաստանի Հանրապետության օրենքներ, հետևելու դատական նիստերի ժամանակացույցին և այլն: Բաժինն ունի կայքէջին հղում՝ www.datalex.am**:** Սույն կարգի 5-րդ կետի 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերի համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը:

6. Կայքի գլխավոր էջի և գլխավոր էջի նյութերը տեղադրվում են հայերենով և անգլերենով:

7. Կայքի տեխնիկական ապահովության համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը:

8. Կայքում տեղեկատվությունը համապատասխան մարմինների կողմից տեղադրվում է համակարգ մուտք գործելու միջոցով՝ մուտքագրելով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի կողմից տրամադրված օգտվողի անունը և գաղտնաբառը:

9. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմն օգտվողի անունը և գաղտնաբառը տրամադրում է համապատասխան մարմինների կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

10. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը պարբերաբար կատարում է կայքի ուսումնասիրություն և յուրաքանչյուր ամսվա 10-րդ աշխատանքային օրն արդյունքների մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Մարմնի անվանումը	Գնման առարկան	Կատարման հիմքը	Գնման պահանջի ծագման հիմքը	Կատարողը	Գինը	Կանխավճարը	Պայմանագրի կնքման ամսաթիվը	Ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման վերջնաժամկետը	Պայմանագրի պատկերա-մուտը

kar1104

Ձև N 2

Մարմնի անվանումը	ՊՈԱԿ-ի անվանումը	Պայմանագրի առարկան	Գումարը (դրամ)	Պայմանագրի ժամկետը	Պայմանագրի պատկերամուտը	Ընդունման-հանձնման ակտերի պատկերամուտը

kar1104